Վերջին դուռը

Bookmark

Charles Aznavour

D’une porte l’autre

Bookmark

Շառլ Ազնավուր

Վերջին դուռը

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Համլետ Գասպարյանի

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

ՀՏԴ 78:82-94
ԳՄԴ 85.31
Ա 250

Ա 250 Ազնավուր Շառլ
Վերջին դուռը/ Շառլ Ազնավուր.- Եր.: Newmag, 2020.- 160 էջ:

Այս գրքում մեծ շանսոնիեն խոսում է ամենապոպուլյար հարցերի մասին: Ինչու է ժամանակակից արվեստն այդքան կանխատեսելի, հեռուստատեսությունը՝ մակերեսային, շոու բիզնեսը՝ գռեհիկ: Ինչպես վերաբերվել ձեզ առնչվող հրապարակումներին, որոնք հայտնվում են դեղին մամուլում և ֆեյք լուրերի հոսքում: Եվ երբ ու որ տարիքում վերջ տալ վատ սովորություններին:

Արվեստ, ամերիկյան մշակույթի պատճենում և քաղաքականություն: Ազնավուրը պատմում է, թե ինչպես է քվեարկել ընտրություններում, արձագանքել իր մահվան մասին կեղծ լուրերին, ծանոթացել իր կեղծ ազգականների հետ, առաջին անգամ նստել նախագահական օդանավ ու աշխատել դեսպանի պաշտոնում: Եվ վերջապես հենց այս գրքում առաջին ու վերջին անգամ պատասխանում է հարցին. «Դուք Ձեզ ավելի շատ ֆրանսիացի՞ եք զգում, թե՞ հայ»:

ՀՏԴ 78:82-94
ԳՄԴ 85.31

ISBN 978-9939-884-01-1
Շառլ Ազնավուր. «Վերջին դուռը» © «Նյու Մեգ» ՍՊԸ, 2020
Գիրքը թարգմանվել և հրատարակվել է ֆրանսիական Les Editions du Seuil հրատարակչական ընկերության թույլտվությամբ:

Charles Aznavour. D'une porte l'autre
© Don Quichotte Editions, une marque des Editions du Seuil, 2011
Շապիկի լուսանկարը՝ © Vincent Lignier
Հեղինակի լուսանկարը՝ Դավիթ Հակոբյանի

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:
Իրավունքները ձեռք են բերվել «ԱՐԻ» գրական գործակալության միջոցով:

ՆԱԽԱԳԾԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Amundi ACBA
ASSET MANAGEMENT

Ձեր փորձառու գործընկերը

amundi-acba.am

Bookmark

Բովանդակություն

	Նախաբան	**9**
Գլուխ I	**Իմացության շեմին**	**13**
Գլուխ II	**Աշնան շեմին**	**37**
Գլուխ III	**Վերջին դուռը**	**55**
Գլուխ IV	**Հույսի լայն դուռ**	**89**
Գլուխ V	**Ինձ պետք էր ձայնափող**	**117**
Գլուխ VI	**Իշխանության շեմին**	**133**
Գլուխ VII	**Բնության շեմին**	**145**
	Վերջաբան	**153**

Bookmark

Նախաբան

Սիրելի՛ ընթերցող, քանի դեռ նոր ես բացում այս փոքրիկ գիրքը, ուզում եմ մի խոստովանություն անել. ես անկազմակերպ մարդ եմ: Վաղուց ի վեր զուր փորձում եմ գրքերս ու իրերս դասավորել, մտքերս ի մի բերել, ոչինչ չի ստացվում: Չգիտեմ ինչու և ինչպես ամեն անգամ դրանք աննկարագրելի խառը վիճակում են: Այսպես, երբ գրում եմ, ակամա մի թեմայից մյուսն եմ թռչում, հետո դարձյալ վերադառնում եմ նույն նյութին:

Բայց ի՞նչ կարող եմ անել, մտքերիս ընթացքը կյանքիս նման է: Իսկ կյանքս ուղիղ գծով չի ընթացել, ընդհակառակը: Եթե հետևած լինեի ավագ քրոջս՝ Ադայի օրինակին, եթե փոքր հասակից օրագիր պահած լինեի, այնտեղ կշարադրեի առօրյաս, արկածներս ու այլ բաներ: Դժվար է, սակայն, հետքայլ անել և կյանքիս թելը հասցնել մինչև տասը տարեկանս:

Ավելի ուշ հասկացա, որ ամեն ինչ կորած չէ, և երբեք էլ ուշ չէ գրիչ վերցնել: Ուստի սկսեցի մոլեսկինի[1] կազմով տետրի

[1] Moleskine – իտալական Modo & Modo ընկերության գրենական պիտույքներ արտադրող ապրանքանիշ է: «Մոլեսկին» ապրանքանիշով արտադրանքը համաշխարհային ճանաչում ունի այն աստիճան, որ նոթատետրերի համար դարձել է հասարակ անուն: Դասական «մոլեսկինը» կոշտ կազմով, 5 առաձգական ժապավենով կողպվող, քուղով և այցեքարտերի համար վերջին կազմի վրա նախատեսված գրպանիկով սև նոթատետր է: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

մեջ ջանասիրաբար գրի առնել այն, ինչ ինձ հետաքրքրում էր կամ վերաբերում: Ավա՛ղ, 10 տարվա՝ խնամքով պահած գրառումներիս առաջին հատորը բաժին դարձավ բագաժի մի գողի՝ Չիվիտավեկիայից Սարդինիա թռչելիս: Գողը թռցրեց 10 տարվա իմ մտքերը, իսկ ես 10 տարի կորցրի մինչև ուշքի եկա: Հիմա երբ ջանք եմ թափում, որպես իրեն հարգող գրչի[2] մարդ (կու կու կուկուրիկու), փետրահան անել անցյալս, հասկանում եմ, թե ինչ մեծ օգուտ կարող էր տալ անհետացած մոլեսկինս:

Ավա՛ղ, ինչ եղել է, եղել է, փակենք ափսոսանքի տետրը և բացենք հույսինը:

Քանի որ մեջքս գետնին տվող մարդ չեմ, 4 տարի է սկսել եմ սևագրության նոր տետր պահել: Այնտեղ ամեն ինչ նշված է խառնիխուռն, մտքերս ոգու ամենայն ազատությամբ ճախրում են աջ ու ձախ: Ձեզ համար դրանք մի փոքր կարգի եմ բերել՝ առանց այնուամենայնիվ փոխելու ձևը:

Այսպիսով, ձեզ խոնարհաբար զգուշացնում և կանխավ շնորհակալություն եմ հայտնում բարեհաճորեն ընդունել իմ խոսքը կարգավորող հազար ու մի շրջադարձերը:

Հենց այդ շրջադարձերն են ինձ դարձրել այն, ինչ կամ: Ահա թե ինչու դրանք ինձ համար այդչափ թանկ են:

---

[2] Plume (ֆր.) – փետուր բառը նշանակում է նաև գրիչ:

Ես չընտրեցի ոչ ուղիղ ճամփան՝
Չափազանց դյուրին, ոչ էլ ծուռումուռը։
Այլ նախընտրեցի քարքարոտը,
Պակաս բանուկն ու
Անանցանելին։
Քանզի չարչարանաց
Հենց այդ ճամփան է տանում,
Երբ որ տքնում ես,
Դեպի բարձունքներ,
Ուր օդը մաքուր է ու ջինջ։

Bookmark

I

Իմացության շեմին

«Ամեն ինչ իր ժամանակն ունի»,- ասում է առածը: Կարող եմ հաստատել դա:

Առաջին անգամ, երբ համալսարան ոտք դրեցի, արդեն հասել էի թոշակի գնացող ռեկտորի տարիքին: Չբավարարվելով ինձ հագցնելով երկարափեշ, սև զգեստ՝ հյուրընկալներս գլխիս դրեցին քառակուսի մի գլխարկ՝ իր անբաժան փոմփոլով, որն իմ ամեն մի շարժումի հետ կայտառորեն պարում էր այն աստիճան, որ ստիպված էի ուղղել անհնազանդ մազափնջի նման: Գովաբանական ճառը լսելուց հետո թրռչկոտող փոմփոլս ու ես ստացանք կարմիր ժապավենով երիզված դիպլոմ: Վերջապե՛ս, ես դարձա «*դոկտոր honoris causa*», այսինքն՝ «պատվավոր դոկտոր»: Ի՞նչ ծրագիր: Ես անհամբեր սպասում էի, թե այդ կոչումից հետո, ուր որ է, ի՞նչ փոփոխություններ էին կատարվելու իմ մարմնում: Բայց իզուր, հակառակ սպասումիս՝ ոչինչ էլ չեղավ. ինչքան էլ արժեքավոր՝ այդ պատվավոր կոչումը մի սանտիմետր անգամ բոյս չավելացրեց, դեռ ավելին, գլուխս չլցրեց նոր կարգավիճակիս հարիր վարքի կանոններով ու գիտելիքով: Գրո՛ղը տանի: Երկու լուծում ունեի փոխհատուցելու համար պակասը՝ ինքնագոհ գի-

տունի տեսք ընդունել (դա հեռու չէր տանի) կամ զուսպ մնալ և իմ շուրջ գտնվող խորագիտակ անձնավորությունների հետ հարգանքով վարվել: Ընտրեցի երկրորդը՝ մեծապես հույս ունենալով, որ իմ սիրելի դոկտոր ընկերներն ինձ չեն հրավիրի ճառ ասելու: Ուղեղների այդ կաճառի առջև ամոթ կլիներ: Չէի ազատվի «Ես արդեն ինձ տեսնում էի»[1] երգելով: Թռչկոտող փոմփոլի հետ միասին դա շփոթմունք կառաջացներ: Բարեբախտաբար ինձնից ոչինչ չպահանջեցին, և ես ժամանակ ունեցա հանդարտորեն խորհել ճակատագրի հեգնանքի և բախտի քմայքների մասին:

Գիտեք, որ ինձ երբևէ չեն հեռացրել որևէ ուսումնական հաստատությունից: Պատճառը շատ պարզ է. 10,5 տարեկանից հետո դպրոց չեմ հաճախել, աղքատությունը պարտավորեցնում է: Այդ ժամանակ բախտ չունեինք օգտվելու անվճար կրթությունից: Պետք էր վճարել կամ հաշտվել վիճակի հետ: Ընտրությունը քոնն է:

Էհ, հեղինակավոր լիցեյում, հետո էլ համալսարանում սովորելն ինձ թույլ կտար ավելի հարուստ ու ծաղկուն մտավոր պաշար ձեռք բերել: Սակայն չեմ ափսոսում: Երբ նայում եմ, թե ինչ է եղել իմ կյանքն ուսման վկայականիս և համալսարանական դիպլոմիս միջև, ինքս ինձ ասում եմ. «Սիրելիդ իմ Շառլ, դու փոխանակումից ոչինչ չես կորցրել»:

Իմ կյանքն այնքան հարուստ է եղել փոփոխություններով ու անսպասելի պահերով... Եթե կյանքս պատմեմ առանց ոչինչ բաց թողնելու, չափազանց կզարմանաք: Ես հարյուրավոր

[1] Je m'voyais déjà (1960) – Ազնավուրի ամենահայտնի երգերից մեկը, որը նրան առաջին հռչակը բերեց:

երկրներ եմ այցելել, հանդիպել եմ կայսրերի, թագավոր-թագուհիների, նախագահների հետ: Ինձ ընդունել են Սպիտակ տանը, Կրեմլում և այլուր: Սակայն ինձ միշտ զգացել եմ իմ մանկական ընթերցանությունների հերոսների նման: Լուի-Անրի Բուսենարի[2] «Փարիզցի տղայի շուրջերկրյա ճանապարհորդությունը» գրքի հերոսի պես փոքրիկ փարիզցի էի՝ մխրճված արտառոց արկածների մեջ: Գնում էի աչքերս բաց, բաբախող սրտով՝ հաճախ չիմանալով ինչպես ինձ պահել կամ ձեռքերս ուր դնել: Եվ եթե, ի վերջո, կրկնության բերումով մի կերպ սովորեցի դա, այնուամենայնիվ պաշտոնական և կիրթ շրջանակներում երբեք ինձ լավ չեմ զգացել: Բացառությամբ երկու տեղերի՝ Փարիզի Ելիսեյան պալատում և Հայաստանի նախագահականում: Չէ՞ որ միշտ էլ լավ ես զգում քո տանը և ծնողներիդ տանը:

Ամեն դեպքում, արհեստիս շնորհիվ շփվել եմ դիրքով ինձնից շատ բարձր մարդկանց հետ՝ հանճարների, մտավորականների, տարբեր երկրների արտիստների, տարբեր գույնի քաղաքական գործիչների, տարբեր կրոնների հոգևորականների հետ: Երբ խորացված կրթություն ես ստանում, հույս ունես, չէ՞, որ այն քեզ տանելու է հաստատուն, կոնկրետ և գրավիչ մի տեղ, ոչ թե դիպլոմդ պարզապես կախելու ես ծնողներիդ բուխարու վերևը: Ես դիպլոմ չստացա, սակայն մնացած ամեն ինչում ավելի շուտ լիուլի հաջողեցի:

Դպրոցն իմ կյանքում այնքան կարճ ժամանակ է զբաղեցրել, որ առաջին օրը չեմ կարող մոռանալ: Դեռ երեխա էի,

[2] Louis-Henri Boussenard (1847-1910) - ֆրանսիացի գրող, արկածային գրականության հեղինակ: